ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՂԱԶԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ ՍԱՄՎԵԼԻ

ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՆԱԽԱՁԵՌՆԵԼՈՒ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԵՆԵՐԸ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԺԲ.00.04 – Դատական իրավունք (դատարանակազմություն, քաղաքացիական դատավարություն, քրեական դատավարություն, կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն, օպերատիվ-հետախուզական գործունեության տեսություն) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

Երևան – 2020

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

КАЗАРЯН ТИГРАН САМВЕЛОВИЧ

ПРОБЛЕМЫ ВОЗБУЖДЕНИЕ УГОЛОВНОГО ДЕЛА В УГОЛОВНОМ ПРОЦЕССЕ РА

АВТОРЕФЕРАТ

Дисертации на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.04 – Судебное право (судоустройство, гражданский процесс, уголовный процесс, криминалистика, судебная экспертиза, адвокатура, теория оперативно-розыскной деятельности)

Ереван - 2020

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝ իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Գ.Ս.Ղազինյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, Վ.Գ.Ենգիբարյան

իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ Ռ.Ն.Մելիքյան

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ Ոստիկանության կրթահամալիր

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2020 թվականի սեպտեմբերի 11-ին՝ ժամը 14^{30}-ին, Երևանի պետական համալսարանում գործող՝ ԲՈԿ-ի իրավագիտության 001 մասնագիտական խորհրդի նիստում (0025, ք.Երևան, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքված է 2020թ. հուլիսի 13-ին:

Մասնագիտական խորհրդի գիտ.քարտուղար,
իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ Տ.Հ.Սուջյան

Тема диссертации утверждена в Ереванском государственном университете

Научный руководитель: доктор юридических наук, профессор, академик НАН РА Г. С. Казинян

Официальные оппоненты: доктор юридических наук, профессор В.Г.Енгибарян
кандидат юридических наук, доцент Р.Н.Меликян

Ведущая организация: Образовательный комплекс Полиции РА

Защита состоится 11-ого сентября 2020г. 14^{30} часов на заседании специализированного совета ВАК 001 по юриспруденции при Ереванском государственном университете (0025, г.Ереван, ул. Алека Манукяна 1).

С.диссертацией можно ознакомиться в читательном зале научных работников библиотеки ЕГУ.

Автореферат разослан 13-ого июля 2020 года.

Ученый секретарь специализированного совета,
кандидат юридический наук, доцент Т.О.Суджян

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության թեմայի արդիականությունը: Թեմայի արդիականության մասին են վկայում Հայաստանի Հանրապետությունում շարունակվող դատաիրավական բարեփոխումներին զուգընթաց քրեական վարույթ նախաձեռնելուն վերաբերող քրեադատավարական իրավակարգավորումների շուրջ ծավալվող գիտական բանավեճերը:

Քրեական վարույթ նախաձեռնելը, այն է՝ քրեական գործ հարուցելու փուլն ունակ է երբեմն որոշելու գործի ելքը՝ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում կայացնելով: Հիշյալ հարցի կապակցությամբ համանման իրավակարգավորումներ է նախատեսել նաև ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագիծը (այսուհետ նաև՝ Նախագիծ)՝ սահմանելով քրեական վարույթ չնախաձեռնելու քրեադատավարական հետևանքները:

Արդյունքում՝ ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի ընդունմանն ընդառաջ առանցքային նշանակություն է ձեռք բերում գործող քրեադատավարական կարգավորումներով նախատեսված քրեական գործի հարուցման փուլի ուսումնասիրությունը, որի արդյունքում կբացահայտվեն առկա խնդիրները և կառաջարկվեն համարժեք և արդյունավետ լուծումներ: Վերջիններս կարևոր նշանակություն կունենան ինչպես իրավակիրառ պրակտիկայում խնդրո առարկա փուլի արդյունավետության բարձրացման, այնպես էլ անձանց իրավունքների ու իրավաչափ շահերի ապահովման առավել արդյունավետ երաշխիքների սահմանման տեսանկյունից:

Բարձր գնահատելով քրեական վարույթ նախաձեռնելու վերաբերյալ տարբեր տեսաբանների կողմից կատարված ուսումնասիրությունները, միևնույն ժամանակ անհրաժեշտ ենք համարում ընդգծել, որ բացակայում է հիմնախնդրի վերաբերյալ համակարգված ամբողջական ուսումնասիրություն: Սույն հետազոտությունն ուղղված է այնպիսի մեխանիզմների մշակմանը, որոնք կապահովեն օրենքի գերակայության սկզբունքի կիրառումը հանցագործությունների վերաբերյալ հաղորդումների քննության արդյունքում դատավարական որոշում կայացնելիս, քրեական գործ հարուցելու փուլում ապացույցների ձեռքբերման և օպերատիվ-հետախուզական միջոցառումների կատարման դատավարական հնարավորությունների ընդլայնմանը, դատախազական հսկողության և դատական վերահսկողության արդյունավետության բարձրացման այնպիսի երաշխիքների նախատեսմանը, որոնք կարևոր են անձի իրավունքների և օրինական շա-

հերի պաշտպանության տեսանկյունից:

Վերոնշյալ խնդիրները պահանջում են նոր մոտեցումներ, որոնք արմատապես կբարեփոխեն քրեական դատավարության սկզբնական փուլը՝ ապահովելով դրա օպերատիվությունը և արդյունավետությունը: Նշված հանգամանքներն էլ հենց պայմանավորում են քրեական վարույթ նախաձեռնելու դատավարական կարգի խորը հետազոտության կատարման և նախաքննության մարմիններին, դատախազներին, դատարաններին առկա խնդիրների գիտական լուծման ապահովման անհրաժեշտությունը՝ մի կողմից տուժողի, իսկ մյուս կողմից ենթադրյալ հանցանք կատարած անձի սահմանադրական իրավունքների և օրինական շահերի պաշտպանության և արդյունավետ հավասարակշռության ապահովման նպատակով:

Մատնանշվածը և մի շարք այլ հանգամանքներ պայմանավորում են սույն հետազոտական աշխատանքի արդիականությունը:

<u>Հետազոտական թեմայի մշակվածության աստիճանը:</u> Քրեական վարույթ նախաձեռնելու հիմնախնդիրները հետազոտության առարկա են դարձել խորհրդային և ժամանակակից դատավարագետների գիտական աշխատություններում: Այդ ուսումնասիրությունների շարքում հատկապես պետք է ընդգծել Ս.Ա.Դիլբանդյանի, Ա.Ս.Ղամբարյանի, Ն.Ս.Ալեքսեևի, Ա.Ռ.Բելկինի, Ս.Ե. Վիցինի, Լ.Վ.Գալովկոյի, Ռ.Դ.Ռախունովի, Վ.Մ.Սավիցկիի, Մ.Ս.Ստրոգովիչի, Ի.Լ.Պետրուխինի, Մ.Ա.Չելցովի, Ա.Ս.Շատալովի, Ս.Մ.Շեյֆերի, Յու.Կ.Յակիմովիչի և այլոց գիտական հոդվածներն ու աշխատությունները: Չնայած դրան պետք է նշենք, որ քրեական վարույթ նախաձեռնելու մի շարք հիմնախնդիրներ դեռևս լիարժեք կերպով ուսումնասիրված չեն:

<u>Հետազոտական աշխատանքի օբյեկտը</u> հանցագործությունների մասին հաղորդումների քննության արդյունքում քրեական վարույթ նախաձեռնելու հարցի լուծման ընթացքում ծագող իրավահարաբերություններն են:

<u>Հետազոտական աշխատանքի առարկան</u> քրեական վարույթ նախաձեռնելու վերաբերյալ առկա տեսական առաջարկներն են, համապատասխան ոլորտը կարգավորող ՀՀ քրեական դատավարության օրենսդրությունը, ինչպես նաև արտասահմանյան երկրների քրեադատավարական վերաբերելի դրույթները, իրավակիրառ պրակտիկայի նյութերը, այն է՝ դատական ակտերը, քրեական գործ հարուցելու և հարուցումը մերժելու մասին որոշումները, վիճակագրական տվյալները, որոնք արտացոլում են քրեական վարույթ նախաձեռնելիս վարույթն իրականացնող մարմինների գործողությունները:

<u>Հետազոտական թեմայի նպատակներն ու խնդիրներն:</u> Հետազոտական աշխատանքի նպատակը քրեական վարույթ նախաձեռնելու տեսական և գործնական հիմնախնդիրների համալիր ուսումնասիրությունն է և դրա հիման վրա օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի կատարելագործմանն ուղղված առաջարկների մշակումը: Նշված նպատակը ենթադրում է լուծել հետևյալ խնդիրները.

1. սահմանել քրեական վարույթ նախաձեռնելու հասկացությունը և խնդիրները քրեական դատավարությունում,
2. հստակեցնել քրեական վարույթ նախաձեռնելու հիմքի հասկացությունը և առիթների շրջանակը,
3. հետազոտության առարկա դարձնել մասնավոր մեղադրանքի գործերով քրեական վարույթ նախաձեռնելու առանձնահատկությունները,
4. ուսումնասիրության առարկա դարձնել քրեական գործ հարուցելու փուլում ձեռք բերված տվյալների՝ որպես ապացույց օգտագործելու հնարավորությունը,
5. վեր հանել անձի նկատմամբ քրեական վարույթ նախաձեռնելու առանձնահատկությունները,
6. ուսումնասիրության առարկա դարձնել քրեական վարույթ նախաձեռնելու նկատմամբ դատախազական հսկողության և դատական վերահսկողության բովանդակությունը, նշանակությունն ու խնդիրները,
7. համեմատաիրավական վերլուծության ենթարկել քրեական վարույթ նախաձեռնելու վերաբերյալ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի և ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի իրավակարգավորումները,
8. ձևակերպել առաջարկություններ, որոնք ուղղված կլինեն քրեական վարույթ նախաձեռնելու իրավակարգավորումների կատարելագործմանը և այդ ընթացքում անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության լրացուցիչ երաշխիքների ապահովմանը:

<u>Հետազոտության տեսական հիմքը</u>: Հետազոտության աղբյուրներն են քրեական վարույթ նախաձեռնելու հիմնախնդիրների բացահայտմանը և վերլուծությանը նվիրված մենագրությունները, դասագրքերը, ատենախոսությունները, գիտական հոդվածները և այլ աշխատություններ:

<u>Հետազոտական աշխատանքի իրավական և փորձառական հիմքը</u>: Հետազոտական աշխատանքի իրավական հիմքը կազմել են ՀՀ Սահմանադրությունը, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների վերաբերյալ միջազգային իրավական ակտերը, մասնավորապես՝ Մարդու ի-

րավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան, ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը և ուսումնասիրվող հասարակական հարաբերությունները կարգավորող այլ նորմատիվ իրավական ակտեր:

Հետազոտական աշխատանքի փորձառական հիմքը կազմել են հանցագործությունների մասին ավելի քան 100 հաղորդումներ և դրանց հիման վրա կայացված քրեական գործի հարուցումը մերժելու և քրեական գործ հարուցելու մասին որոշումներ, 60-ից ավելի քրեական գործեր, որոնցով կայացված վերջնական դատավարական որոշումները մտել են օրինական ուժի մեջ, ինչպես նաև ՀՀ Սահմանադրական դատարանի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, ՀՀ վճռաբեկ դատարանի բազմաթիվ դատական ակտեր:

<u>Հետազոտության մեթոդաբանական հիմքը:</u> Պայմանավորված հետազոտության նպատակով՝ այն իրականացվել է համընդհանուր՝ դիալեկտիկական և պատմական, համատեսական՝ ինդուկցիայի, դեդուկցիայի, անալիզի և սինթեզի, ինչպես նաև մասնագիտական՝ համակարգակառուցվածքային և համեմատական-իրավական մեթոդների կիրառմամբ:

<u>Հետազոտության գիտական նորույթը:</u> Չնայած քրեական վարույթ նախաձեռնելուն առնչվող որոշ հիմնախնդիրներ ուսումնասիրության առարկա են դարձվել մի շարք դատավարագետների աշխատանքներում, այնուամենայնիվ, հայրենական քրեական դատավարությունում բացակայում են սույն հարցի ուսումնասիրությանը նվիրված համընդգրկուն աշխատությունները:

Ատենախոսությունը հայրենական իրավագիտության առաջին համապարփակ և ամբողջական գիտահետազոտական ուսումնասիրությունն է, որտեղ փորձ է արվել հնարավորինս համալիր և բազմակողմանի քննարկել և վերլուծել քրեական վարույթ նախաձեռնելու տեսական և գործնական հիմնախնդիրները:

<u>Պաշտպանության ներկայացվող դրույթները:</u>

1. Հանցագործության մասին հաղորդում ներկայացնող, այդ թվում՝ ենթադրյալ հանցագործությունից տուժած անձանց իրավունքների պաշտպանության լրացուցիչ երաշխիքների ամրագրման համատեքստում անհրաժեշտ է քրեական վարույթ նախաձեռնելիս ոչ միայն պահպանել, այլ նաև ընդարձակել ստուգողական գործողությունների կատարման շրջանակը: Մասնավորապես, կարծում ենք, որ անհրաժեշտ է թույլատրել կատարել նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 217-րդ հոդվածով նախա-

տեսված առարկաների, փաստաթղթերի, կենդանիների, մարդու կամ կենդանու դիակի զննում, 220-րդ հոդվածով նախատեսված քննում, ինչպես նաև սահմանել բացատրություններ վերցնելու դատավարական կարգ, որի համաձայն՝ բացատրություն տվող անձն օժտված կլինի վկայի դատավարական կարգավիճակից բխող իրավունքներով և պարտականություններով:

Արդյունքում հետաքննության մարմինը, քննիչը զրկված չեն լինի հանցագործության մասին հաղորդման մեջ շարադրված տեղեկությունները ստուգելու և ենթադրյալ հանցագործության «տաք հետքերով» առավելագույն ծավալով ապացույցներ ամրագրելու հնարավորությունից, քանի որ հաճախ առերևույթ հանցագործության մասին տեղեկությունները բացակայում են հաղորդման մեջ և ստացվում են բացառապես ստուգման արդյունքում:

2. Հաշվի առնելով քրեական վարույթ նախաձեռնելու առիթների դերն ու նշանակությունը, ինչպես նաև առանձին տեսակների վերաբերյալ առկա թերի իրավակարգավորումները և տարընթերցումները՝ առաջարկում ենք քրեական վարույթ նախաձեռնելու առիթների դասակարգումն ու տարանջատումն իրականացնել ոչ թե ըստ սուբյեկտի, այլ կախված տվյալ սուբյեկտի համար հանցագործության մասին հաղորդում ներկայացնելու կամահայտնության ձևի, այն է՝ իրավունք է, թե պարտականություն:

Մասնավորապես, կարծում ենք, որ ֆիզիկական և իրավաբանական անձանց համար հանցագործության մասին հաղորդում ներկայացնելը պետք է լինի իրավունք, իսկ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց, ինչպես նաև մասնագիտական գործունեություն իրականացնող անձանց համար՝ պարտականություն, եթե ենթադրյալ հանցագործության մասին տեղեկությունները նրանց հայտնի են դարձել իրենց գործունեության ընթացքում: Ինչ վերաբերում է լրատվական գործունեություն իրականացնող կազմակերպություններին և լրագրողներին, ապա նրանց կողմից ներկայացված հաղորդումները պետք է դիտարկել որպես ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից ներկայացված հաղորդում:

3. Հաշվի առնելով քրեական գործ հարուցելու փուլի խնդիրներն ու նպատակները՝ անհրաժեշտ է նախատեսել խնդրո առարկա փուլի կոնկրետ ապացուցման առարկա, որը մի կողմից կկանխորոշի քրեական գործի հարուցման փուլի սահմանները, մյուս կողմից կկանխարգելի դրա անհարկի ծանրաբեռնումը և ձգձգումները: Մասնավորապես դրանում պետք է ներառել միայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 107-րդ հոդվածի

1-ին մասի 1-ին և 3-րդ կետերը, այն է՝ դեպքը և հանգամանքները (կատարման ժամանակը, տեղը, եղանակը և այլն), ինչպես նաև հանցագործության՝ քրեական օրենքով նախատեսված հատկանիշները:

4. Մասնավոր մեղադրանքի գործերով քրեական վարույթի իրականացումը անհրաժեշտ է պայմանավորել բացառապես ենթադրյալ հանցագործությունից տուժած անձի բողոքի առկայությամբ: Արդյունքում՝ ենթադրյալ հանցագործությունից տուժած անձի բողոքի բացակայության դեպքում պետք է կայացվի քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում, որով քրեական հետապնդման մարմինը պետք է քննարկման առարկա դարձնի ենթադրյալ արարքի մասնավոր մեղադրանքի գործ լինելու հանգամանքը՝ չանդրադառնալով դրա կատարմանը որևէ անձի առնչության հարցին:

Իսկ եթե ենթադրյալ հանցագործությունից տուժած անձը փոխում է իր դիրքորոշումը և հրաժարվում նախապես ներկայացրած բողոքից, ապա պետք է կայացվի համապատասխանաբար քրեական գործի հարուցումը մերժելու կամ քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշում՝ ենթադրյալ հանցագործությունից տուժած անձի բողոքի բացակայության հիմքով: Տվյալ դեպքում ևս արարքի կատարմանը որևէ անձի առնչության փաստին իրավական գնահատական տալու հնարավորություն վարույթն իրականացնող մարմինը չպետք է ունենա:

Մինչդեռ գործող իրավակարգավորումների և ձևավորված նախադեպային իրավունքի պայմաններում ենթադրյալ հանցագործությունից տուժած անձի բողոքի բացակայության դեպքում կարող է հարուցվել քրեական գործ, ինչպես նաև շարունակվել հարուցված քրեական գործով քննությունը, եթե ոչ արդարացնող հիմքով քրեական գործի հարուցումը մերժելու կամ քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշման կայացման դեմ առարկի ենթադրյալ հանցանք կատարած անձը:

5. Ենթադրյալ հանցանք կատարած անձանց իրավունքների ու իրավաչափ շահերի պաշտպանության առավել արդյունավետ երաշխիքներ ստեղծելու նպատակով կարևոր է դատավարական կարգավիճակ տալ և դրանից բխող իրավունքներով և պարտականություններով օժտել այն անձին, որը քրեական գործ հարուցելու մասին որոշմամբ դիտարկվել է որպես քրեորեն պատժելի արարք կատարող անձ: Ընդգծենք, որ նման եզրահանգման կարելի է գալ քրեական գործ հարուցելու մասին որոշման ինչպես նկարագրական-պատճառաբանական, այնպես էլ եզրափակիչ մասերում առկա ձևակերպումներից:

6. Գործող քրեադատավարական իրավակարգավորումների պայմաններում քրեական գործի հարուցման փուլի նկատմամբ դատախազական հսկողությունը դրսևորվում է առանձին գործողությունների (անգործության) և որոշումների օրինականության և հիմնավորվածության ստուգման միջոցով, քանի որ օբյեկտիվորեն նախապատրաստված նյութերի ամբողջ ծավալը յուրաքանչյուր պահի վերջինիս տիրապետության ներքո չի գտնվում: Ուստի դատախազական հսկողության արդյունավետության բարձրացման նպատակով անհրաժեշտ է ներդնել քրեական գործերի թվայնացման միասնական համակարգ, որը հասանելի կլինի մի կողմից վարույթն իրականացնող հետաքննության մարմնին կամ քննիչին, իսկ մյուս կողմից՝ համապատասխան դատախազական հսկողություն իրականացնող դատախազին:

7. Տարիներ շարունակ հետաքննության մարմինների կողմից հանցագործությունների մասին հաղորդումների ընդունման, գրանցման և հաշվառման միասնական դատավարական կարգ նախատեսված չէ: Նույնիսկ որոշ հետաքննության մարմինների, օրինակ՝ Հայաստանի փրկարար ծառայության մարմինների, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության, օդանավի հրամանատարի համար բացակայում է համապատասխան դատավարական կարգը:

Ինչ վերաբերում է ոստիկանությանը, ապա միայն 2017 թվականի նոյեմբերի 23-ին ՀՀ Կառավարության թիվ 1498-Ն որոշմամբ նախատեսվեց համապատասխան կարգը, որի բացակայության պայմաններում մինչ այդ վերջիններս ղեկավարվել են ՀՀ ներքին գործերի նախարարի և գլխավոր դատախազի 1999 թվականի սեպտեմբերի 1-ի թիվ 12/354 համատեղ հրամանով, չնայած նրան, որ «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված է, որ այդ կարգը պետք է սահմանվի ՀՀ Կառավարության կողմից:

Արդյունքում քրեական վարույթ նախաձեռնելու նկատմամբ դատախազական հսկողության և դատական վերահսկողության արդյունավետության բարձրացման տեսանկյունից կարևոր է հանցագործությունների մասին հաղորդումների հաշվառման և գրանցման միասնական դատավարական կարգի ամրագրումը, որը կկանխարգելի օրենսդրական անկատարությամբ պայմանավորված հաղորդումների չգրանցման դեպքերը:

Ատենախոսության տեսական և գործնական նշանակությունը: Ատենախոսության շրջանակներում կատարված ուսումնասիրությունների նշանակությունն առաջին հերթին այն է, որ հայրենական դատավարական իրավունքում առաջին անգամ իրականացվել է քրեական վարույթ նախա-

ձեռնելու ընթացքում իրավակիրառ պրակտիկայում առկա խնդիրների վերհանմանն ու դրանց լուծման ուղիների քննարկմանը նվիրված համալիր հետազոտություն: Ատենախոսության մեջ արված վերլուծությունների արդյունքները կարող են օգտագործվել հետագա գիտական հետազոտություններում և այն դասընթացներում, որոնց առարկան առնչվում է քրեական վարույթ նախաձեռնելու քրեադատավարական հիմնահարցերի ուսումնասիրությանը: Կատարված ուսումնասիրությունները, դրանց հիման վրա ներկայացված առաջարկությունները և հիմնավորումները կարող են օգտագործվել նաև իրավաստեղծ գործունեության մեջ, բացի այդ՝ նպաստել իրավակիրառ պրակտիկայի կատարելագործմանը:

Հետազոտության արդյունքների փորձարկումը: Ատենախոսությունը պատրաստվել է ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնում: Հետազոտության արդյունքներն արտացոլված են հեղինակի կողմից հրապարակված գիտական հոդվածներում, որոնք լույս են տեսել ամսագրերում և գիտական ժողովածուներում: Ատենախոսության մի շարք դրույթներ ներկայացվել են ատենախոսի կողմից պատրաստված գիտական զեկույցներում և ամբիոնային գիտական հաղորդումներում:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը պատրաստված և ձևավորված է ՀՀ Բարձրագույն որակավորման կոմիտեի կողմից ներկայացվող պահանջներին համապատասխան և բաղկացած է ներածությունից, երեք գլխից, որոնք ընդհանուր առմամբ ներառում են ինը պարագրաֆ, եզրակացությունից, օգտագործված գրականության, իրավական ակտերի և պրակտիկ նյութերի ցանկից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում հիմնավորվում է հետազոտության թեմայի արդիականությունը, ներկայացվում են մշակվածության աստիճանը, հետազոտության տեսական, նորմատիվ, փորձառնական հիմքերը, մեթոդաբանությունը, հետազոտության օբյեկտը և առարկան, նպատակը և խնդիրները, գիտական նորույթը, ձևակերպվում են պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները, ներկայացվում են հետազոտության տեսական և գործնական նշանակությունն ու հետազոտության արդյունքների փորձարկումը:

Առաջին գլուխը՝ «Քրեական վարույթ նախաձեռնելու ընդհանուր բնութագիրը» վերտառությամբ, բաղկացած է երեք պարագրաֆներից:

Առաջին գլխի առաջին պարագրաֆում՝ «Քրեական վարույթ նախաձեռնելու հասկացությունը և խնդիրները» վերտառությամբ, հեղինակը, հաշ-

վի առնելով տեսության մեջ առկա, ինչպես նաև ներպետական դատական մարմինների կողմից ձևավորված դիրքորոշումները, վերլուծել է քրեական գործ հարուցելու փուլի բովանդակությունը՝ համապարփակ կերպով ներկայացնելով ինչպես նպատակներն, այնպես էլ խնդիրները:

Համեմատական վերլուծության ենթարկելով գործող քրեական դատավարության օրենսգրքի և Նախագծի իրավակարգավորումները՝ հեղինակն անդրադարձել է նաև խնդրո առարկա փուլի պահպանման անհրաժեշտության հարցին:

Առաջին գլխի երկրորդ պարագրաֆում՝ «Քրեական վարույթ նախաձեռնելու առիթների ու հիմքերի հասկացությունը և փոխհարաբերակցությունը» վերտառությամբ, հեղինակը, ուսումնասիրության առարկա դարձնելով քրեական վարույթ նախաձեռնելու առիթների և հիմքերի հասկացությունը, անդրադարձել է դրանց միջև առկա փոխհարաբերակցությանը՝ ընդգծելով, որ այն դրսևորվում է հետևյալ կերպ. ենթադրյալ հանցագործության մասին բավարար տվյալներ պարունակող տեղեկությունները պետք է ստացվեն քրեական գործ հարուցելու օրինական առիթներից կամ դրանցից ստացված տեղեկությունների ստուգման արդյունքում:

Առաջին գլխի երրորդ պարագրաֆում՝ «Հանցագործության մասին հաղորդումների որոշ հիմնահարցեր» վերտառությամբ, հեղինակը մանրամասն վերլուծել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով, ինչպես նաև Նախագծով ամրագրված քրեական վարույթ նախաձեռնելու առիթների շրջանակը՝ արտասահմանյան երկրների փորձի համատեքստում: Քննարկման առարկա է դարձվել ֆիզիկական և իրավաբանական անձանց հաղորդումները, հանցագործությունների մասին լրատվության միջոցների հաղորդումները, հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի, դատարանի, դատավորի կողմից իրենց լիազորություններն իրականացնելիս հանցագործության մասին տվյալների, հանցագործության նյութական հետքերի և հետևանքների հայտնաբերումը: Միևնույն ժամանակ քննարկման առարկա է դարձվել նաև 16 տարին չլրացած անձի կողմից հանցագործության մասին հաղորդում ներկայացնելու առանձնահատկություններին:

Երկրորդ գլուխը՝ «Քրեական վարույթ նախաձեռնելու քրեադատավարական բովանդակությունը և դրա կատարելագործման հիմնահարցերը» վերտառությամբ, բաղկացած է երեք պարագրաֆներից:

Երկրորդ գլխի առաջին պարագրաֆում՝ «Քրեական գործ հարուցելու փուլում ձեռք բերված տվյալների ապացուցողական նշանակությունը» վերտառությամբ, հեղինակի կողմից նախևառաջ քննարկման առարկա են

դարձվել քրեական գործի հարուցման փուլում անձից բացատրություններ վերցնելու դատավարական կարգը, դրա արդյունքում ստացված տվյալների որպես ապացույց օգտագործման թույլատրելիությունը, այն քննչական գործողությունների շրջանակը, որը հնարավոր է կատարել նշված փուլում:

Միևնույն ժամանակ հեղինակի կողմից ընդգծվում է քրեական գործի հարուցման փուլի ապացուցման առարկայի սահմանման անհրաժեշտությունը, որը կկանխորոշեր նախնական ստուգում իրականացնելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի գործողությունները:

Երկրորդ գլխի երկրորդ պարագրաֆում՝ «Մասնավոր մեղադրանքի գործերով քրեական վարույթ նախաձեռնելու հիմնախնդիրները» վերտառությամբ, հեղինակը մանրամասն ուսումնասիրության առարկա է դարձրել մասնավոր մեղադրանքի գործերով քրեական վարույթ նախաձեռնելու առանձնահատկությունները՝ ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքի լույսի ներքո՝ համեմատական վերլուծության ենթարկելով նաև Նախագծի իրավակարգավորումները: Վերլուծությունների արդյունքում վեր են հանվել իրավակիրառ պրակտիկայում առկա խնդիրները, օրենսդրական բացերն ու տարընթերցումները, որոնք հանգեցնում են հանցավորության դեմ պայքարի քրեադատավարական ռեսուրսների վատնմանը, երբեմն էլ փակուղային իրավիճակների առաջացմանը: Հեղինակը համեմատական վերլուծության ենթարկելով Նախագծի իրավակարգավորումները՝ հաշվի է առել նաև արտասահմանյան երկրների փորձը:

Երկրորդ գլխի երրորդ պարագրաֆում՝ «Ենթադրյալ հանցանք կատարած անձի իրավունքները քրեական վարույթ նախաձեռնելիս» վերտառությամբ, հեղինակը, հիմք ընդունելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և ՀՀ Վճռաբեկ դատարանի ձևավորած իրավական դիրքորոշումները, վերլուծել է քրեական գործի հարուցման որոշմամբ անձի նկատմամբ փաստացի քրեական հետապնդում սկսելու դեպքում պաշտպանության իրավունքի ապահովման մեխանիզմները: Վերլուծելով մեղայականով ներկայանալու քրեադատավարական կարգավորումները՝ հեղինակն անդրադարձել է ենթադրյալ հանցանք կատարած անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության առավել կենսունակ և արդյունավետ երաշխիքների սահմանման անհրաժեշտության հարցին:

Երրորդ գլուխը՝ «Դատախազական հսկողությունը և դատական վերահսկողությունը քրեական վարույթ նախաձեռնելու նկատմամբ» վերտառությամբ, բաղկացած է երեք պարագրաֆներից:

Երրորդ գլխի առաջին պարագրաֆում՝ «Դատախազական հսկո-

ղությունը և դատական վերահսկողությունը հանցագործության մասին հաղորդումների ընդունման, գրանցման և ստուգման նկատմամբ» վերտառությամբ, հեղինակի կողմից համակարգային վերլուծության է ենթարկվում հանցագործության մասին հաղորդումների ընդունման, գրանցման և ստուգման դատավարական կարգի օրենսդրական անկատարությունը, որն ուղղակիորեն հանգեցնում է դատախազական հսկողության արդյունավետության նվազման: Քննարկման առարկա է դարձվում հետաքննության մարմինների կողմից հանցագործության մասին հաղորդումների ընդունման, գրանցման և ստուգման միասնական դատավարական կարգի ամրագրման կարևորության հարցը՝ դատախազական հսկողության պատշաճ իրականացման ապահովման համատեքստում:

Երրորդ գլխի երկրորդ պարագրաֆում՝ «Քրեական գործ հարուցելու մասին որոշումների նկատմամբ դատախազական հսկողությունը և դատական վերահսկողությունը» վերտառությամբ, հեղինակը վերլուծել է դատախազական հսկողության և դատական վերահսկողության շրջանակներում քրեական գործ հարուցելու մասին որոշումների օրինականության ստուգման առանձնահատկությունները: Հաշվի առնելով խնդրո առարկա որոշումների բողոքարկման հնարավորության օրենսդրական ուղղակի ամրագրման բացակայությունը՝ հեղինակը ուսումնասիրության առարկա է դարձրել ներպետական դատական պրակտիկան՝ անդրադառնալով նաև քրեական գործ հարուցելու մասին որոշումների անօրինական լինելու դեպքում դրանց վերացման հնարավորությանը, մինչ այդ կատարված քննչական և դատավարական գործողությունների օրինականության հարցին: Միևնույն ժամանակ քննարկման առարկա է դարձվել նաև նշված որոշումների դատական վերահսկողության շրջանակներում բողոքարկման հնարավորությանը և սահմաններին:

Երրորդ գլխի երրորդ պարագրաֆում՝ «Քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումների նկատմամբ դատախազական հսկողությունը և դատական վերահսկողությունը» վերտառությամբ, հեղինակը, հիմք ընդունելով ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքը, ուսումնասիրության առարկա է դարձրել քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումների նկատմամբ դատախազական հսկողության և դատական վերահսկողության առանձնահատկություններին՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ քրեական գործի հարուցման օրինական և հիմնավորված մերժումը անձին իր իրավունքների ապօրինի սահմանափակումներից և չհիմնավորված քրեական հետապնդումից պաշտպանելու կարևոր երաշխիք է:

Քննարկման առարկա է դարձվել մի կողմից բողոքարկման իրավունք ունեցող անձանց շրջանակը և ժամկետները, մյուս կողմից սահմանները և բողոքի քննության արդյունքում կայացվող որոշումների բովանդակությունը: Հեղինակի կողմից անդրադարձ է կատարվել նաև դատական վերահսկողության շրջանակներում քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման վերացման դեպքում այն կայացրած հետաքննության մարմնի աշխատակցին կամ քննիչին, ինչպես նաև այդ որոշման օրինականության նկատմամբ դատախազական հսկողություն իրականացրած դատախազին վարույթից հեռացնելու հարցին:

Ատենախոսության եզրակացություններում, ի լրումն պաշտպանության ներկայացվող դրույթների, կատարվել են հետևյալ հիմնական եզրահանգումներն ու առաջարկությունները:

1. Առաջարկում ենք ուղղակի պարտականություն սահմանել հանցագործության մասին հաղորդումն ստացած պաշտոնատար անձի համար, որը քրեական գործ հարուցելու լիազորություն չունի, անհապաղ լուծել ըստ ենթակայության ուղարկելու հարցը՝ առանց որևէ քննչական կամ դատավարական գործողություն կատարելու՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ դրանք փաստացի կկատարվեն նման լիազորություն չունեցող, ի սկզբանե բացարկման ենթակա անձի կողմից, որն էլ կհանգեցնի ստացված տեղեկությունների՝ որպես ապացույց օգտագործելու անթույլատրելիության:

2. Առաջարկում ենք հանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասում առկա կարգավորումն առ այն, որ դատական քննության ընթացքում տրված բանավոր հաղորդումը մտցվում է դատական նիստի արձանագրության մեջ, քանի որ դատարանը քրեական հետապնդման մարմին չէ, իսկ այն դեպքում, երբ ենթադրյալ հանցագործության առկայության մասին կեզրահանգի նաև դատարանը, ապա հնարավորություն կունենա օգտվելու իրեն վերապահված լիազորություններից՝ ՀՀ գլխավոր դատախազին դիմելու:

3. Լրատվության միջոցների հաղորդումների՝ որպես ինքնուրույն քրեական վարույթ նախաձեռնելու առիթի նախատեսումն արդարացված չէ, քանի որ այն օբյեկտիվորեն անկատար մնացող պարտականություն է ստեղծում մի կողմից իրավապահ մարմինների համար՝ հետևելու դրանցում զետեղված տեղեկատվությանը, որպեսզի հանցագործության մասին տրված յուրաքանչյուր հաղորդմանը տրվի օրենքով սահմանված ընթացք, իսկ մյուս կողմից՝ լրատվության միջոցների համար՝ բացահայտելու իրենց աղբյուրը:

4. Առաջարկում ենք ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 176-

րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը լրացնել հետևյալ խմբագրությամբ. «(...) օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի աշխատակցի (...) կողմից հանցագործության մասին տվյալների, հանցագործության նյութական հետքերի և հետևանքների հայտնաբերումը՝ իրենց լիազորություններն իրականացնելիս»:

5. Առաջարկում ենք ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 121-րդ հոդվածի 3-րդ մասը, որով սահմանվում է, որ «որպես ապացույց կարող են օգտագործվել նաև կատարված կամ նախապատրաստվող հանցագործությունների վերաբերյալ ընդունված բանավոր հայտարարությունների, մեղայականով ներկայանալու, ձերբակալման, անձանց իրավունքների և պարտականությունների պարզաբանման առիթով կազմված արձանագրությունները», լրացնել հետևյալ խմբագրությամբ. «ինչպես նաև մինչև քրեական գործ հարուցելը վերցված բացատրությունները»:

6. Առաջարկում ենք ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում սահմանել մինչև քրեական գործ հարուցելը անձից բացատրություններ վերցնելու դատավարական կարգը, որի համաձայն՝ վերջինս ոչ միայն կնախազգուշացվի ակնհայտ կեղծ բացատրություններ տալու համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին, այլ նաև կունենա վկայի դատավարական կարգավիճակից բխող իրավունքներ և պարտականություններ:

7. Առաջարկում ենք ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում նախատեսել դրույթ առ այն, որ «ենթադրալ տուժողը մասնավոր մեղադրանքի գործերով կարող է հետ վերցնել իր կողմից ներկայացված բողոքը, սակայն բողոքի բացակայության հիմքով քրեական գործի հարուցումը մերժելու կամ քրեական գործի վարույթը կարճվելու դեպքում կրկին բողոք ներկայացնելու իրավունք չունի: Նույն հիմքերով կրկին ներկայացված բողոքը քննության ենթակա չէ»:

8. Առաջարկում ենք ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 6-րդ մասը լրացնել 3-րդ պարբերությամբ հետևյալ բովանդակությամբ. «Սույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում նշված հիմքով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումն արգելք չէ նույն դեպքի կապակցությամբ քրեական գործ հարուցելու համար, եթե հաղորդումը ներկայացվել է ենթադրյալ հանցագործությունից տուժած անձի կամ նրա օրինական ներկայացուցչի կողմից, և եթե մինչ այդ հնարավոր չի եղել պարզելու վերջինիս դիրքորոշումը»:

9. Առաջարկում ենք հանել Նախագծի 173-րդ հոդվածի 3-րդ մասը,

այն է՝ «Եթե հաղորդումով փաստվող գործողությանը կամ անգործությանը կարող է տրվել միայն սույն օրենսգրքի 440-րդ հոդվածով նախատեսված որևէ հանցավոր արարքին համապատասխանելու նախնական իրավական գնահատական, ապա քրեական վարույթ նախաձեռնելու պարտականությունն առաջանում է միայն այն դեպքում, երբ տվյալ հաղորդումը ներկայացրել է ենթադրյալ հանցանքից տուժած անձը կամ նրա ներկայացուցիչը, և միաժամանակ նրան հայտնի չէ ենթադրյալ հանցանքը կատարած անձը»:

10. Առաջարկում ենք ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ. «Կոնկրետ անձի նկատմամբ քրեական գործ հարուցելու դեպքում վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է գրավոր ծանուցել նրա կողմից հանցագործություն կատարելու վերաբերյալ առկա կասկածանքի մասին՝ միևնույն ժամանակ պարզաբանելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կասկածյալի դատավարական իրավունքներն ու պարտականությունները»:

11. Առաջարկում ենք լրացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին մասը 3-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ. «որի նկատմամբ հարուցվել է քրեական գործ»:

12. Առաջարկում ենք ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանել, որ. «Հանցագործության մասին հաղորդումն ընդունելու լիազորությամբ օժտված անձինք՝ հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը պարտավոր են օրենքով սահմանված կարգով ընդունել և գրանցել հանցագործության մասին ներկայացված յուրաքանչյուր հաղորդում, որի վերաբերյալ դիմումատուին պետք է հանձնեն կտրոն-ծանուցագիր»:

13. Առաջարկում ենք ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում նախատեսել նորմ, որը պարտականություն կսահմանի ինչպես այն հետաքննության մարմնի, քննիչի համար, որը հանցագործության մասին հաղորդումն ըստ ենթակայության հանձնում է, այնպես էլ նրանց համար, ովքեր ստանում են, անհապաղ ծանուցելու համապատասխանաբար հսկողություն իրականացնող դատախազին: Հիշյալ իրավակարգավորումը կբացառի դատախազների կողմից այդպիսի հաղորդումների փաստացի չստուգված լինելու դեպքերը:

14. Առաջարկում ենք ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածի 4-րդ մասը լրացնել հետևյալ խմբագրությամբ. «Միջնորդության մեջ պետք է նշված լինեն հանցագործության մասին հաղորդումը ստանալու ամսաթիվը, դրա ստուգման ուղղությամբ կատարված գործողությունները, պատճառները, որոնք թույլ չեն տալիս որոշում ընդունել օրենքով

սահմանված ժամկետում, գործողությունների ցանկը, որոնք ենթակա են կատարման, ստուգումն ավարտելու ենթադրյալ ժամկետը»:

15. Առաջարկում ենք ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածի 4-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ. «Հանցագործության մասին հաղորդման ստուգման ժամկետը երկարացնելու մասին միջնորդությունը բավարարելու մասին հետաքննության մարմինը, քննիչն անհապաղ ծանուցում են հանցագործության մասին հաղորդում ներկայացրած անձին»:

16. Քրեական գործ հարուցելու մասին որոշումը վերացնելուց հետո դատախազը պետք է որոշում կայացնի քրեական գործի հարուցումը մերժելու մասին, որի պայմաններում իրավունքի ուժով պետք է անթույլատրելի ճանաչվեն քրեական գործ հարուցելուց հետո կատարված բոլոր քննչական և դատավարական գործողությունների արդյունքները:

17. Առաջարկում ենք ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Հանցագործության մասին հաղորդման առիթի օրինական լինելու դեպքում հետաքննության մարմինը, քննիչը որոշում է կայացնում քրեական գործի հարուցումը մերժելու մասին՝ սույն օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասում նախատեսված հիմքերի հայտնաբերման դեպքում: Քրեական գործի հարուցման մերժումը, սույն օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 3-13-րդ կետերով նախատեսված հիմքերով, թույլատրվում է միայն կոնկրետ անձի նկատմամբ»:

18. Առաջարկում ենք ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածը լրացնել 6-րդ մասով և շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Դատախազը քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը վերացվելու և քրեական գործ հարուցվելու մասին տեղեկացնում է հանցագործության մասին հաղորդում ներկայացրած անձին՝ նշելով այն մարմինը, որին ուղարկվել են քրեական գործի նյութերը հետագա քննության համար»:

19. Կարծում ենք, որ դատական վերահսկողության շրջանակում քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը վերացնելն ինքնին հիմք է այն կայացրած հետաքննության մարմնի աշխատակցին կամ քննիչին, ինչպես նաև այդ որոշման օրինականության նկատմամբ դատախազական հսկողություն իրականացրած դատախազին վարույթից հեռացնելու համար:

<u>Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.</u>

1. Քրեական գործ հարուցելու մասին որոշման նկատմամբ դատախազական հսկողության հարցի շուրջ // Դատական իշխանություն. 2019, 11-12 (245-246), էջեր 63-72,

2. Քրեական վարույթ նախաձեռնելու առիթների և հիմքերի փոխհարաբերակցությունը //Գիտական Արցախ, № 1(4), 2020, Երևան, «ԱՐՑԱԽ» հրատ., 2020, էջեր 51-60,

3. Մասնավոր մեղադրանքի գործերով քրեական վարույթ նախաձեռնելու հիմնախնդիրները //ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների նստաշրջանի նյութերի ժողովածու, 2(2) 2018, ԵՊՀ հրատ., Երևան, 2019, էջեր 269-292,

4. Ենթադրյալ հանցանք կատարած անձի իրավունքներն ու օրինական շահերը քրեական գործի հարուցման փուլում //Պետություն և իրավունք, թիվ 2-3 (84-85), Երևան, 2019, էջեր 19-29,

5. Քրեական վարույթ նախաձեռնելու փուլի ընդհանուր բնութագիրը //ԵՊՀ ՈՒԳԸ ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ, 1.2 (25), հասարակական և հումանիտար գիտություններ (իրավագիտություն, մանկավարժություն, սոցիոլոգիա, տնտեսագիտություն և կառավարում), ԵՊՀ հրատ., Երևան, 2018, էջեր 127-136,

6. Քրեական գործի հարուցման փուլի ապացուցողական նշանակությունը // XIV Державинские чтения в Республике Мордовия : материалы Междунар. Науч-практ. Конф. (Саранск, 26 апр. 2018 г.) : в 2 ч. / [редкол.: Н.Н. Азисова и др.] ; Средне-Волжский институт (филиал) ВГУЮ (РПА Минюста России). – Саранск : ЮрЭксПрактик, 2018. – Ч. 1. Էջեր 34-45,

7. Քրեական վարույթ նախաձեռնելու փուլի հասկացությունը և խնդիրները // «ՕՐԵՆՔԻ ՊԱՏՎԱՐ» գիտամեթոդական ամսագիր, 9-րդ համար, «ՀՀ Ոստիկանության կրթահամալիր» ՊՈԱԿ, Երևան, 2020, էջեր 123-135

8. Դատախազական հսկողությունը հանցագործության մասին հաղորդումների ընդունման, գրանցման և ստուգման նկատմամբ// Պետություն և իրավունք, թիվ 1 (86), Երևան, 2020, էջեր 60-70:

GHAZARYAN TIGRAN

PROBLEMS OF INITIATION OF CRIMINAL PROCEEDINGS IN CRIMINAL JUSTICE OF THE REPUBLIC OF ARMENIA

Along with the judicial reforms ongoing in the Republic of Armenia scientific discussions around criminal procedural legal regulations regarding the initiation of criminal proceedings have received a new boost as a result of which the question what means "initiation of criminal proceedings" has arisen.

The stage of initiating a criminal case is the prototype of a preliminary investigation which sometimes can determine the outcome of the case if a decision not to institute criminal proceedings is taken. In connection with the aforementioned issue, similar legal regulations are also provided for in the draft new Code of Criminal Procedure where the consequences of non-initiation of criminal procedure which result in ceasing of criminal proceedings are defined.

As a result, in anticipation of the adoption of the draft new Code of Criminal Procedure of the Republic of Armenia the research of the criminal case initiating stage under the current criminal procedure regulations is of key importance promoting the establishment existing tasks and suggestion of adequate solutions which will result in increase of effectiveness of the stage under consideration in law enforcement practice and provision of more effective guarantees for rights and legitimate interests of individuals.

Within the context of the foregoing the research of the problems of initiation of criminal proceedings is of key importance.

The scientific novelty of this is that it is the first comprehensive and complete research in domestic jurisprudence where an attempt is made to discuss and analyze in details and in full the theoretical and practical problems of initiating a criminal case basing on existing criminal - procedural regulations on one hand and experience of foreign countries as well as the judicial practice of the Court of Cassation of the Republic of Armenia, the Constitutional Court of the Republic of Armenia and the European Court of Human Rights on the other hand.

In certain chapters of the study the subjects related to the correlation

between the grounds and reasons for initiating criminal proceedings, peculiarities of initiating criminal proceedings in cases of private prosecution, admissibility of using the data obtained at the stage of initiating a criminal case as evidence, prosecutorial supervision over the initiation of criminal proceedings and judicial control have been considered.

As a result of the research the author made a number of proposals of theoretical and practical importance which are aimed at improving the criminal procedure regulations related to the initiating criminal proceedings.

The main provisions of the research are reflected in the scientific articles published by the author.

КАЗАРЯН ТИГРАН

ПРОБЛЕМЫ ВОЗБУЖДЕНИЯ УГОЛОВНОГО ПРОИЗВОДСТВА В УГОЛОВНОМ СУДОПРОИЗВОДСТВЕ РА

Параллельно с судебно-правовыми реформами, продолжающимися в Республике Армения, научные дискусии вокруг уголовно-процессуальных правовых регулирований, касающихся возбуждения уголовного производства получили новый импульс, в результате чего возник вопрос: а что необходимо понимать под "возбуждением уголовного производства".

Этап возбуждения уголовного дела является прототипом предварительного расследования, который иногда может определить исход дела вынесением решения об отказе в возбуждении уголовного дела. В связи с упомянутым вопросом, аналогичные правовые регулирования предусмотрены также в проекте нового уголовно-процессуального кодекса, где определяются уголовно-процессуальные последствия невозбуждения уголовного производства, которыми также завершается уголовное судопроизводство.

В результате, в предверии принятия проекта нового уголовно-процессуального кодекса РА, ключевое значение приобретает изучение этапа возбуждения уголовного дела, предусмотренного действующими уголовно-процессуальными регулированиями, вследствии чего будут установлены существующие задачи и будут предложены адекватные решения, которые будут способствовать как повышению эффективности рассматриваемого этапа в правоприменительной практике, так и установлению более действенных гарантий обеспечения прав и правомерных интересов лиц.

В контексте вышеизложенного, важное значение имеет исследование проблем возбуждения уголовного.

Научная новизна данной работы состоит в том, что она является первым всеобемлющим и полным научно-исследовательским изысканием в отечественном правоведении, где сделана попытка по возможности комплексно и всесторонне обсудить и проанализировать теоретические и практические проблемы возбуждения уголовного дела, принимая за

основание с одной стороны действующие уголовно-процессуальные регулирования, а с другой – опыт зарубежных стран, а также судебную практику Кассационного суда РА, Конституционного суда РА и Европейского суда по правам человека.

В отдельных разделах исследования предметом рассмотрения стали такие вопросы, как соотношение оснований и поводов возбуждения уголовного производства, особенности возбуждения уголовного производства по делам частного обвинения, допустимость использования данных, полученных на этапе возбуждения уголовного дела, в качестве доказательства, прокурорский надзор над возбуждением уголовного производства и судебный контроль.

В результате исследования автор сделал ряд предложений, имеющих теоретическое и практическое значение, которые направлены на усовершенствование уголовно-процессуальных регулирований возбуждения уголовного производства.

Основные положения исследования отражены в научных статьях, опубликованных автором.